Շինարարության վարման մասյանում պարտադիր նշումներ կատարելը և դրանց չկատարման արդյունքում բացասական հետևանքների առաջացումը:

Ամբողջ վերոգրյալի արդյունքում՝ Դատարանը փաստում է, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման, և պետք է անվավեր ճանաչել Արարատի համայնքապետարանի կողմից ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-21/11 ծածկագրով ծառայության մատուցման գնման պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ 19.12.2023թ. թիվ 3287 ծանուցումը:

Դատարանն անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և հայցը բավարարվում է՝ Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 60.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Անդրադառնալով փաստաբանի վարձատրության հարցին՝ Դատարանը գտնում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում արձանագրել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը:

Դատարանն ապացուցված է համարում, որ ԱՁ Կարեն Սարգսյանի և ԱՁ Արմեն Սեդրակյանի միջև կնքվել է իրավաբանական /փաստաբանական/ ծառայությունների մատուցման թիվ 01/24 պայմանագիր, որի 4.1 կետի համաձայն՝ պայմանագրի գինը կողմերի համաձայնությամբ կազմում է 200.000 ՀՀ դրամ գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ որպես վարձատրության խելամտության չափորոշիչներ կարող են հանդիսանալ, մասնավորապես, քաղաքացիական գործի ելքի համար նշանակություն ունեցող՝ փաստաբանի կողմից կատարված գործողությունների ծավալը, բարդության աստիճանը, ուստի հայցի բավարարման պայմաններում սույն քաղաքացիական գործով Հայցվորի շահերը Դատարանում ներկայացման համար որպես փաստաբանի խելամիտ վարձատրության չափ կարող է սահմանվել 70.000 ՀՀ դրամ գումարը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

ԱՁ Արմեն Հակոբի Սեդրակյանի հայցն ընդդեմ Ավշարի համայնքապետարանի իրավահաջորդ Արարատի համայնքապետարանի՝ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-21/11 ծածկագրով ծառայության մատուցման գնման պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու վերաբերյալ 19.12.2023թ. թիվ 3287 ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել Արարատի համայնքապետարանի կողմից ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-21/11 ծածկագրով ծառայության մատուցման գնման պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ 19.12.2023թ. թիվ 3287 ծանուցումը:

Ավշարի համայնքապետարանի իրավահաջորդ Արարատի համայնքապետարանից հօգուտ ԱՁ Արմեն Հակոբի Սեդրակյանի բռնագանձել՝ 70.000 ՀՀ դրամ գումար, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ավշարի համայնքապետարանի իրավահաջորդ Արարատի համայնքապետարանից հօգուտ ԱՁ Արմեն Հակոբի Սեդրակյանի բռնագանձել՝ 60.000 ՀՀ դրամ գումար, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այդ պահից հետո մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2024թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**